

LE DANUBE

LE DANUBE

ՀԱՆՊԵՍ ԵՐԹՆՈՐԵԱՅ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ՕՐԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն երկրի համար տարեկան 12 ֆր. կամ 5 բուպլի թղթագրամ:

Պարսկաստանի համար տարեկան 8 ֆր. կամ 3 բուպլի թղթագրամ:

Փոստի ծախքը խմբագրությունն է կր վճարել:

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ծանուցման տողը 50 սանթիմ է: Հայերեն Պուլկարե-
բէն եւ Ֆանտերէն լեզուով:

Խմբագրությունն զրկուած նամակ կամ գրութիւն ետ
չ'տրուիր:

Նամակ եւ ծրար պէտք է գրիկն հետեւեալ հասցեով:

M. S. TUTUNDJIEFF

Rédacteur du journal "TANOUF"

(BULGARIE)

ROUSTCHOUK

ԳԱՆԳԱՏՆԵՐ

Գանգատներ անվերջանալի ձևերի ներքև կը տե-
ղան Կ.Պոլսէ. մեր թղթակիցներ շարժական փո-
թերի միջոցով կ'ուղղեն մեզ նամակներ ստուար
էջերով սրոնք կը պարունակեն բազմազոյն դան-
գատներ Պատրիարք Աշքեան Սրբազանի հետե-
ւած ուղղութեան դէմ:

Եթէ հարկ լինի այդ երկար գրութիւններ նոյ-
նութիւնով զեռեղել "Գանուբ"ի մէջ կը պարսա-
ւորինք կրկնակի ընդարձակել մեր ծաւալ եւ ձանձ-
րացնել մեր ընթերցողներ, արդար եւ իրաւացի
քննադատութիւններ որք մի օրինակ կերպով ան-
կարող մարդ ցոյց կուտան Պատրիարք Աշքեանն:
Մենք կը բաւականանք մերթ այսպիսի տեսու-
թիւններ, մերթ այդ նամակներէ մի քանիներն
հրատարակելով, կատարել մեր հրապարակագրա-
կան պարտականութիւն, որ այնքան ծանր է մա-
նաւանդ ներկայ ժամանակին մէջ:

Նոքա որ կը կրեն նախանձախնդիր ուղղամիտ
ոգի եւ ունին նմանապէս քիչ շատ լուրջ դատու-
ղութիւն շատ պարզ կերպով կրնան համոզուիլ որ
այդ դժգոհ նախադատութիւններով խմբուած գը-
րութիւններ չեն արդիւնք անձնական ատելութեան
կիրքերի, մի եւ նոյն ժամանակ մենք եւս այնքան

գիւրահաւան միամիտ չենք կարող հանգիստնալ
ճակատ ծռելու համար այդ անգործին դէմ, երբ
նոքա կեղծիքների շուրջ կը դառնան:

Չենք կրնար տեսլ թէ մեր թղթակիցներ հա-
ւատարմապէս անգուրկ կրնան համարուիլ չափա-
ղանցութեան, ընդհակառակն շատ անգամներ գի-
տած եմք որ արտաքոյ կարգի եռանդէ մղուած
երբեմն ճշմարտութեան դէմ մեղանշած են, խոտ-
տովանելու պայմանաւ իրենց այդ պակաս, բայց
այս վերջին շարունակական բողոքների ամբողջին
առջև պահ մի նկատողութեան առնելով թուրքիաի
հայերի վիճակ, Ազգ. Կեդրոնական վարչութեան
չփոխ կերպարան, նկատողութեան առնելով Պոլ-
սոյ Պատրիարքական իրաւասութեան ներքև գա-
նուող հողերի խեղճ կացութիւն, իսկոյն կը հետե-
ցնենք թէ շարժիչ մեծագոյն զօրութիւնն՝ Պատ-
րիարքը անգոր վիճակի մէջ է եւ զուրկ այն ընտիր
բարեմասնութիւններէն առանց սրոյ անկարելի է
կը լինի իւր կեանք այսպիսի վճռողական վայր-
կեանքների մէջ Պոլսոյ Պատրիարքական աթոռին
վրայ մնալ:

Պոլսոյ մէջ Աշքեան Սրբազան բողոքովին անուա-
նական անձնուորութիւն մի կը ներկայացնէ, իւր
շարժումներ ցոյց կուտան թէ անժանօթ կը մնան
նմա հայկական բազմամարդ գաւառներն անգամ

և անկարելի է յայտնել նմա այս ինչ կամ՝ այն ինչ տեղի հայերի կացութեան վրայ մի ամփոփ գաղափար, թողունք այս ամենուն այսօր ընդհանուր Ազգը զբաղեցնող միակ կաթողիկոսական խնդիր մի կայ և Աշքեան Սրբազան անտեղեակ է էջմիածնայ վանքի մէջ անցած դարցածին, որ կը ներէ ըմբռնել մեզ մեր իմացականութիւն Պօլսոյ Պատրիարքարանի և էջմիածնայ Տեղապահութեան միջև կը պակսի մի օրինաւոր թղթակցութիւն, մինչև ցարդ գրեթէ մի քանի ընդհատեալ հեռագիրներ փոխանակուեցան Պօլսոյ և էջմիածնայ մէջ և այսօր ընդհանուր ճշգրիտ երևոյթ է Աշքեան Պատրիարք այնքան ծանօթ է էջմիածնայ կացութեան որքան մի պարզ անհատ որ սովորական հետաքրքրութիւններով չտեսարանած է շատ սեղմուած գաղափարներ կաթողիկոսական Պաշտօնատեղւոյ մասին։ Պօլսոյ Պատրիարքն կաթողիկոսի պակասութեան առթիւ կը պարտաւորի հրահանգներ առ Տեղապահ Սրբազանին, նուիրել նմա իւր բարոյական աջակցութիւնն ամեն պարագայի մէջ, կը պարտի լուսաւորել զայն մի այնպիսի դժուարին վիճակի մէջ, ուր ամեն ինչ սարսափ կ'աղղէ մեզ, և հակառակ այն պարտաւորութիւնների ինչ դրութեան կը հետևի մեր Պօլսոյ Պատրիարքը, անփոյթ կը կատարէ մեքենական մի ամենապարզ գործողութիւն, իւր երթևեկութեան սահման պարփակուած է, Մաքրի քէօյէ Գումֆափու տարածուած երկաթէ ձողերին մէջ ընդհանրապէս, շաբաթական մի երկու անգամուղ այցելութիւն կուտայ Պատրիարքարանին։ Մայր Եկեղեցիին և երբեմն ալ չ'ուշանար, Կրօնական Քաղաքական և այլ ժողովների հազուագիւտներստերին ներկայ գտնուիլ։ որոյ մէջ կը պահէ մի լրուութիւն բազմիցս, նշանակ անկարողութեան, երբեմն կարծիքներ արտայայտել կ'ենէն ժողովականների ծիծաղը շարժելու համար։ երբեմն ալ յոյժ ձանձրանալի քարոզներ կը սկսի, չի լսեր ժողովրդի հառաչներ որ կ'իմացնեն իւրեանց դժգոհութիւն իւր խօսքերի գէմ, և իբրև թէ մեծագոյն դիւցազնութեանց մի գործ լինի կը մեկնի Մաքրի-Քէօյ ուռած իւր կարծեցեալ տարած յաղթանակով, առանց գիտնալու թէ հանրութիւնն ինչ կը խորհի իւր նկատմամբ։

Աշքեան Պատրիարքի անտարբերութիւն այն աստիճան ծայրահեղութիւն կը բուրէ զի մտածել կուտայ այս մեզ կամ նա ներքնապէս ուխտած է ազգի անտանելի վիճակն սաստկացնել։

Դեռ երկու ենթադրութիւններ ներելի են մեզ։

Աշքեան Պատրիարք կրնայ լինիլ որ ունենայ հազուագիւտ յատկութիւններ — թերևս և հանդերձեալի համար կը պահէ. եթէ ունի ինչու չի տեսնէր Հայ ազգի ցաւերն անհոգութիւնով այսպէսնա կ'ենթարկէ իւր անձ ժողովրդի ահեղ և դատապարտող դատաստանին, կրնայ լինիլ որ անվիճելի կերպով տկար կը լինի հասկացողութիւնով և գործելու կողմէն. այդ պարագային կը պարտաւորի նա խելոյն և խելոյն թողսլ աթոռն, քուշուիլ ասպարէզէ տեղի տալով արժանաւորագոյնին որ պիտի գայ այլափոխել իրերն։

Տկար հասկացողութեան և գործելու անկարողութեան վերայ աւելցուցէք նաև դռնհիկ զգացումներ, կ'ունենաք ձեր առաջ Աշքեան Պատրիարքի իսկութիւն. և այսօր նա խաղալիք եղած խեղճ զգացումների ձեռք կը տատանի ահաւոր կերպով ինչպէս մի նաւ փոթորկայոյզ ովկիանին մէջ սպառնացող ալիքների վրայ։ Մի օր այս գաղտնիարի շատագուր հանդիսանալ մի օր դրա հակառակն խորհել, ահա Աշքեան Պատրիարքի քալած ճամբայ։

Վերջերս բացարձակ անգործութեան դատապարտած կերևի, մանաւանդ իւր անձ, կ'անդիտանանք թէ արդեօք ինչ կը մտածէ, ինչու մը ևս կրնայ անցնել Հայ ազգի գլուխ ընտրել տալով զինք ծայրագոյն Պատրիարք ամենայն հայոց, առանց մտածելու թէ մի ժողովուրդ իւր ներկայ անկարող փորձերէն ականատես լինելէն ետք կրն'այ զինքն կաթողիկոսացնելու չափ ապուշ գտնուել։

Մեր մէջ նորա կաթողիկոսացումի ցանկացող կուսակցութեան մի գոյութեան չենք կրնար հաւատալ։

Գանգատներ Պօլսոյ Հայութենէն. գանգատներ գաւառացի Հայերէն ունայն տեղ ի զգաստութիւն բերել ճգնեցան Արմաշցին նա անհոգութեան մէջ թաղուած հնչեցուց իւր քնար. կատաղութեան այրող կրակը վառելով իւր անմեղ հօտին մէջ. որ մի օր չէ մի օր պիտի խլէ իւր ձեռքէն այն գաւազան զոր նուիրական և անեղծանելի կը հաւատայ Փաթիհ Սուլթան Մէհմէտէն ի վեր։

ՖԻԼԻՊԷ

Քաղաքս ունի շուրջ 250 տուն Հայ բնակիչ, սուրբ Անիի գաղթականներէն լինել կը կարծուին:

Ունինք մի եկեղեցի Ս. Գեորգ անուամբ ընդարձակ բակով մը, յորում կը գտնուի մի մատուռ ևս Ս. Խաչի, այս եկեղեցին մինչև տասն և եօթն դարու վերջերը Յունաց Այլ Եւրէ (Ս. Գեորգ) անուն եկեղեցին լինելով 1673 թուականին հռչակաւոր Ապր (Աբրահամ) չէլէպի միջոցաւ Յունացմէ կ'առնուի և Հայ գաղթականութեան կը արուի եկեղեցի չունենալուն պատճառաւ և նոյն անուամբ կը մնայ մինչև այսօր, և դարձեալ Ազգային բարերար Դաւիթ աղա Մալխասեանցի հոգածութեամբ մի քանի անդամներ նորոգուած է եկեղեցին: Եկեղեցւոյ ընդարձակ բակն երբեմն գերեզմանատան կը ծառայէր իսկ այժմ ոչ երկու վարժարան կայ միևնոյն բակի մէջ մին մասնաւորաբար դպրոցի համար չնուած է գետնի վրայ միայն որ կը յիշեցնէ 70-80 տարի առաջ վարժարանաց չէնքերն, և է խարխուլ, յատկացեալ է մանչ տղայոց Ս. Վարդանանց անուան նուիրեալ, իսկ միւսն որ երբեմն Առաջնորդաց յատուկ վայր մը լինելուն առաջնորդարան կ'ըսուէր, իսկ այժմ օրիորդաց վարժարան եղած է Ս. Վառվարինեայ անուամբ:

Երկու քահանայ ունինք մին Աւագերեց Արթ. Տէր Արիստակէս բնիկ տեղացի և միւսն տակաւին երկու տարուան քահանայացեալ Տէր Սարգիս անուամբ Սիմեոնացի, իսկ Քարոզիչ՝ իր բացակայութեամբ կը փայլի. եթէ պատահի եպիսկոպոս կամ վարդապետ մը անցնի քաղաքէս կը բարեհաճին հանդիպելով մեզ 'ի սէր Աստուծոյ կը մխիթարէ ժողովուրդը իւր Աստուածաբանական քարոզներով, ինչպէս որ երկու տարի առաջ տեղացի եպիսկոպոս մը իւր ծննդավայրը յիշելով այցելեց քաղաքս. թէպէտ փիճակնիս Ագրիանուպօլսոյ Առաջնորդին կը պատկանի, սակայն միայն առաջնորդական տուրք վճարելու համար է, զոր քիչ մը ուշանալուն պէս հաւաքչի պաշտօնով մի քահանայ կը ներկայանայ և պահանջած գումարը ամենայն ջերմեռանդութեամբ առնելով կը մեկնի, իսկ հոգեւոր մխիթարութեան համար վարդապետ մ'անդամ չ'ունինք, նախկին Պատրիարքական փոխանորդ Գեր. Տէր Գեորգ Ծ. վարդապետն գրեթէ երեք տարի է որ քաղաքս կը գտնուի իւր ծերութեան օրերը անցունելու նպատակաւ, սակայն նոյն Գերապատուութեան տկար փիճակն չի ներեր միշտ պէտք եղած մխիթարութիւնն տալ ժողովուրդեան:

Եկեղեցին անշարժ կալուածներ ունի որ տարեկան 300 լիրայ հասոյթ կը բերէ, գրեթէ այս գումարը ամբողջութեամբ յատկացեալ է վարժարան

նաց ծախուց. եկեղեցին մինակ աւանդական ժողովրդի կամաւոր նուէրներով կը մատակարարուի երկու բանկալապետներու կողմանէ:

Վարժարաններն Ս. Եկեղեցւոյ յատուկ կալուածներէն կը հոգացուի, որովհետեւ ժողովուրդն սովորութիւն չ'ունի դպրոցական տուրք վճարելու իր զաւակաց կրթութեան և ուսման համար: Հոգաբարձութիւնք կ'ընտրուին ըստ օրինի Ազգ. Սահմանադրութեան, յատուկ ծրագրով կը դասախօսուի և Հայերէն, Պուլկարերէն և Ֆրանսերէն լեզուներէ զատ մի քանի գիտութիւններ ևս կ'աւանդուին, այնպէս որ սոյն դպրոցի չրջանաւարտներն տեղւոյս Պուլկարական Գիմնազիոնին երկրորդ գլխին անմիջապէս կ'ընդունուին:

Արական սեռի աշակերտաց թիւն է 200, իսկ աշակերտուհեաց թիւն 100ի մօտ է. երկու ուսուցիչներ ունինք որոնք երկու եղբայրներ են, մին որ Տնօրինութեան պաշտօն կը վարէ Տիար Գարեգին Շիշմանեան, իսկ փոքր եղբայրը Տիար Հրմայեակ Շիշմանեան, Կարնոյ Առաջնորդական փոխանորդ Գերապատիւ Ղևոնդ Արքազան Շիշմանեանի եղբայրներն են. որոնք 4 տարիէ 'ի վեր կը պաշտօնավարեն աստ տարեկան 144 Օսմ. ոսկւոյ թոշակաւ և Պօլսոյ ուսումնական մարմնոյ կողմանէ վկայեալ են, մի այցելու ուսուցիչ ևս ունինք Պուլկարերէնի համար տարեկան 24 Օսմ. ոսկի թոշակաւ. Թէոտոր Նայաէնօֆ անուամբ:

Իգական սեռի վարժարանը ունի երեք ուսուցչուհիներ որոնցմէ մին գլխաւոր ուսուցչուհի է և 'ի Պօլսոյ դաստիարակեալ Օրիորդ Բուբուլ Չայեան անուամբ սա կ'ստանայ 7 Օսմ. ոսկի ամսաթոշակ. երկրորդ և երրորդը տեղացի մայր ու աղջիկ են. առաջինը երկսեռ փոքրիկ տղայոց կըրթութեան կը պարապի. իսկ երկրորդը օգնական դաստիարակուհի է, այս վերջինք կ'ստանան տարեկան 36 Օսմ. ոսկի:

Օտար վարժարաններ յաճախող աշակերտաց թիւն է 16. որոնցմէ 5ը անցեալ տարեշրջանին մեր Ազգ. վարժարանի անդրանիկ չրջանաւարտներն էին. սոցանէ 2ը Պուլկարական Գիմնազիոնին երկրորդ գլխին են. իսկ 3ը Ֆրանսական Յիսուսեան վարժարանի 3րդ գլխաւոր ընդունուեցան. մընացեալք առանց մեր վարժարանը յաճախելու դիմած էին Պուլկարաց Գիմնազիոն ուր կը գեղերին իրենց սխալանքը դարմանելու. Սօֆիաի գիււորական վարժարանը ունինք մի չրջանաւարտ, և մի ալ բժշկութեան վարժարան (վիշէքուրս):

Աստ ունինք 30ի չափ Հայ վաճառականներ ուրոնցմէ միայն 10ի մօտ տուններ առաջնակարգ վաճառականներ կը համարուին, իսկ մնացեալք փոքրաքանակ. 10ի մօտ ալ արմատեաց վաճառականութեամբ զբաղող ազգայինք կը գտնուին. 130ի չափ արհեստաւորներ, մէկ «Բէքի»ի և մէկ ալ ծխախոտի գործարանատէր, 3 փաւտաբան, և մէկ ալ գեղադործ ունինք:

11 անձինք կառավարութեան պաշտօնեայնք են. որոնցմէ մին զինւորական տեղական բանակի մէջ դեր-տեղակալ (բօս-բօրուչիք) է, 3ը կառավարութեան թարգման, 3ը հեռագրապետ. 2ը կառավարական պաշտօնատան մէջ գրագիր:

Տեղական իշխանութիւնն ամենայն կերպով լաւ կը վերաբերի Հայոցս հետ. նոյնպէս բոլոր Պաշկար ազգն համակրանք:

Երկու ընկերութիւններ գոյութիւն ունին աստ, Դպրոցասիրաց ընկերութիւն, չափահասներէ բաղկացեալ. նոյնպէս Գրասիրաց ընկերութիւն. առաջինը ժամանակ մը իւր փայլուն վիճակը ունենալով իր նպատակն 'ի գործ կը դնէր օգնելով տեղւոյս Ազգ. երկսեռ վարժարանաց, իսկ այն օրէ 'ի վեր որ տուն մը գնած է և յատկացուցած է վարժարանի կալուած: Իսկ երկրորդին նպատակն է Հայ մանկտեաց մտային զարգացման նպատեղ և ունի մի մատենադարան ընդ հսկողութեամբ թաղ. խորհրդոյ. ճիշտ 10 տարի է որ կազմուած է այս բարենպատակ ընկերութիւնը, ունի իւր գրադարանի մէջ 400 կտոր ընտիր մատենաներ. նոյնպէս կարեւոր գումար մը 'ի պահեստի վան կեդրոնաւորուող մը շինութեան:

Հայաստանի այլ և այլ կողմերէ եկած 23ի չափ Հայ պանդուխտներ կը գտնուին աստ և զրեթէ ամենքն ալ ապահովեալ օրականներով, որոնցմէ մաս մը վաճառականաց քով ամսականով կ'աշխատին, մաս մ'ալ ալիւրի գործարաններուն մէջ արհեստով կը պարապին մնացեալն ալ Բ-հ-Է-Է են, որոնք օրական կը շահին 3-5 ֆրանք և կը ծախսեն 13½ ու կանոնաւորապէս կրնան ապրիլ:

Շրջակայ գիւղերը և քաղաքները ուր տեղ չառքիչ Հայեր կը գտնուին և քահանայի պէտք կ'ուսնեան տեղւոյս քահանայք կ'այցելեն, մկրտութեան, պսակի և թաղման խորհուրդը կատարելով կը վերադառնան:

Անցելոյն մէջ չառ մը նշանաւոր Հայեր ունեցէր է քաղաքս և Ազգն ալ վայելած է և տակաւին կը վայելէ նրանց բարիքներն.

ԹԱՐԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Կ. ՊՕԼԻՍ 20 ՓԵՏՐ. 1892

Պէշիքթաշի քարոզիչ Նար պէյ Սրբազան Արքեպիսկոպոսի պաշտօնադրութիւն ընդհանուր Ազգի ցաւ և խօսակցութեան նիւթ կը մատակարարէ դեռ, գունատ մի դէմք, փոշեպատ վերարկով մի, գանգաղ և մտազբաղ քալուածք մի, ահա՛ ինչ որ մնացած է նախկին կարգի պերճաբան քարոզիչին որ Հայութեան փառքն է. մարդ տխուր լինելու է հաւատալու համար թէ Աշքեանի մի կոնդակ բաւական եղած լինի զայն արատաւորելու, Նար-պէյ Սրբազան միշտ իւր բարձր նշանակութիւնն և դիրքն անխախտ կը պահէ ողջ միտ Հայութեան դասակարգին մէջ: Սրբազանն մի քանի օր է թեթեւ հիւանդ է:

Շատ կը վախցուի որ Ալէքսանդրեան և Ապահունի Եպիսկոպոսներն ալ Նար-պէյ Սրբազանի պէս սեւ կոնդակներու ենթարկուին, Գրիգորիս Եպիսկոպոս մէկ երկու անգամ 'ի Պատրիարքարան կոչուելով հարցաքննուեցաւ, իսկ Եղնիկ Եպիսկոպոս իբր խռովայոյց, ազգամիտս պիտի խրկուի Երուսաղեմ ուր հայրիկի հետ կ'երևայ թէ պիտի ապաշխարէ իւր մեղաց վրայ, եթէ երբէք ապաշխարումի կարօտ բան մի գործած է:

22 ՓԵՏՐՈՒԱՐ ՇԱՖԱԹ

Այսօր ուրբաթ մ'ալ անցաւ և Ազգ. Ժողովի նիստերու դադարումն չորս ամիսի յրացաւ, Կաթողիկոսական ընտրութեան ժամանակամիջոցն զրեթէ վերջացաւ, և ամօթ կը լինի ըսել ո՞ր աստիճան ծեծուեցաւ այս խնդիր վարչութեան գրասեղանին վրայ. կ'ըսուի թէ Կայս. Կառավարութիւնն է որ կ'արգիլէ ընդհանուր Ժողովոյ նիստերն. բոլորովին սխալ է այս, Ժողովոյ նիստերուն դադարման պատճառ Աշքեան Պատրիարք է. երբ ինչ կառավարութեան առաջ գումարումի պէտքն ըզգարի և ստիպողական ցոյց տայ կարելի՞ բան է որ նա արգիլել ճգնի դարձեալ մեր ընդհանուր Ժողովի նիստերն, կ'երևայ թէ Կաթողիկոսանալու շերմ փափաքն Աշքեանի միջոց չէ ձգեր երեսփոխանական Ժողովի գումարումին վրայ մտածելու համար:

Մեր ասկից առաջ նամակների միոյն մէջ խօսելով Սրբազան Հայրիկի հիւանդութեան մասին, ըսած էինք թէ ծանրապէս հիւանդ է այն, մեր

այս լուր որ վերապահութեամբ միայն հաղորդուած էր «Դանուբ»-ի խմբագրութեան, կը թուի թէ առիթ տուէր է հակադրանքներ թերթերու մտածելու համար թէ չարակամութեան արդիւնք եղած լինի այդ մենք Հայրիկի անձնականին հետ հաշիւ մի չ'ունինք որ անախորժ գրոյցներով Նորին Սըրբազնութեան կաթողիկոսացման արգելք դառնանք. Հայրիկ հակառակ իւր զգայուն մեծ սրտին չ'կըրնարով գոհացում տալ դարիս պահանջմանց, անկարելի է որ կաթողիկոսանայ և Ազգը քուէ չի տար արդէն, տայ կամ չ'տայ այդ մեզ փոյթ չէ, հիւանդութեան մասին գարով հիւանդ է, դարձեալ երուսաղեմէ փետր. 8 թուականու գրուած մտերմական նամակէ մը հետեւեալը կը քաղեմ. «Հայրիկի վիճակ գոհացուցիչ չէ, փետր. 3ի երկուշաբթի օրը գիշերային տաղնապներ ունեցաւ, հիմայ մի քիչ հանգիստ է. բժիշկ և դեղ քովէն պակաս չեն, խեղճ ծերունին բոլորովին այլափոխուած, նրա առողջ դէմքը չոր սկորներ դարձած են, ցաւալի է տեսնել Պատրիարք Վահագեանի անտարբերութիւն որ տեղեկութիւն անգամ չ'ուզելով ունենալ նորա վիճակի վրայ զբաղուած է միայն վանքի մատակարարութեան և կարուածնելու կանոնաւորման խնդրով որ ոչ նուազ կարեւոր են...» Մեր գրածի տարբեր գոյներով տրուած բացատրութեանց այս է մեր պատասխանը:

Շ. ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

Կ.ՊՈԼԻՍ 24 ՓԵՏՐՈՒԱՐԻ 1892

Մինչև ցարդ շատ ու շատ բաներ խօսուեցան ու գրուեցան Գեր. Խորէն Արքեպիսկոպոս Լուսինեանի մասին, թէ նպատաւոր թէ աննպատաւ, նըպատաւոր խօսող մասն է մեր մէջ լուսաւորեալ և զարգացեալ ըսուած դասակարգը. իսկ հակառակ մասը աէր պապաներ և ապուշներ մութ գաղափարներով տողորուած անձնաւորութիւններ են իւր կրօնական թշնամիք ընդհանրապէս ընտրութեանց ժամանակները երևան կ'ելլեն, բայց քանի որ այս ալ առիթ մ'էր իրենց համար վրէժ լուծելու չը վարանեցան ամեն տեսակ կեղտոտ ու քսու զրկապարտութիւններ ընել, և փոխանակ միաձայն բողոքելու Պատրիարքի արած տխմարային գործի դէմ ուրախանալով ու հրճուելով, ոմանք յայտնի և ոմանք ալ գաղտնի շնորհակալութիւններ իսկ մատուցին:

Աւերորդ է ըսել. Խորէն Արքեպիսկոպոսի պա-

տիւր ու արժանիքը մեզ համար նոյնն է ինչ որ էր առաջ և առաւել ևս բարձրացած որ զոհ եղած է ազգզաւնաս տնօրինութեան մը:

Մենք Հայերս առիթ է ըսել անբացատրելի կերպով ապերախ եմք դէպի մեր բարձր անձնաւորութիւնք չեմք գիտեր վարձատրել այն անձինքը որոնք ժողովրդի բարւոյն և օգտին համար կ'աշխատին:

Այսօր կը պարտաւորինք բաւականանալ ըսելու միայն թէ դա միակ անձնաւորութիւնը չ'է մեր կրօնականաց վարկը բարձրացնող օտարին առջև և ամեն բարեմասնութեամբ առաջինն չ'է մեր եպիսկոպոսաց մէջ, ով որ գիտէ նորա կեանքի պատմութիւնը նա լաւ գիտէ նորին Սրբազնութեան արժանիքը, սակայն ինչով վարձատրած եմք զինքը 20-23 տարիներէ 'ի վեր 20 մէճիսիյէ (84 փրանք) ամսականաւ Պէշիքթաշի քարոզչութիւնով, և երբ Պատրիարքական ընտրութիւնք ալ պատահին յիմարական փաստերով կը զրկեմք զինքը այն Աթոռէն որուն վրայ իրմէ շատ անարժանը բաղմած է. այդ ժամանակներ մեր գլխաւոր փաստերը կը լինին, Առաջնորդական պաշտօն վարած չը լինելով անփորձ լինելը. ու կաթողիկոսներէ դարձած լինելով օր մը ժողովուրդը կաթողիկոսութեան դարձնելու հաւանականութիւնը է՝ չիտակը ընտիր տրամաբանութիւն, թողուլ Արմաշու վանքի մէջ գանդադութեամբ ժամանակ անցնող Աշքեանը և Լուսինեանի պէս անփորձ մարդը Պատրիարք ընել:

Նորին Սրբազնութիւնը այժմ ազատ է և ազատ պիտի մնայ շնորհիւ Ն. Վ. Սուրբանի. ինքը խօստովանած է թէ սխալեցաւ. և արդարեւ ալ սխալած է:

Շիտակը խօսելով ցաւալի է Պ. Մ. Փ. ի ընթացքը որ կը հիւսնկալէ իւր թերթի էջերուն մէջ իւր թղթակից Պ. Արմէնի թշնամական թղթակցութիւնները Լուսինեան Արքեպիսկոպոսի նկատմամբ բայց պատճառը. այդ անձանց հաճելի երևնալու համար եկեղեցեաց բեմէն ա'խ Հայրենիք վախ Հայրենիք պուռացած չլինելն է:

ՎԱՐԱՋԴԱՏ

Յ. Գ.

Պուկարիոյ Կ. Պօլսոյ գործակատար Պ. Տօգթ. Վօլքովիչի սճրագործը ցոյց տուողին. Ն. Վ. Սուրբանի Կառավարութիւնը կը խօստանայ 500էն 1000 ոսկի նուէր տալ:

ՆՈՅՆ

**ԳՈՅԱԿԱՆԻՆ ՀԱՄԱԶԱՅՆ ԱԾԱԿԱՆՆԵՐՆ
ՀԱՅ ՀՈՅԱՆՔ ՀԱՄԱՐՈՂ ՄԻ ՆՈՐ
ՏՐԱՄԱՐԱՆ**

Ազնիւ ընթերցող, Մարտէյի «Արմէնիա»-ն երբ մեզի գէտ խոյանալ կը սիրէ՝ փաստէ զուրկ լինելուն համար՝ իրիմեան Հայրիկէն կ'սկսի, ժողովրդեան արհամարանքն մեր վրայ հրապուրելու պատրուակաւ, առանց խորհելու եւ համոզուելու որ մեր հանգէս ազատ ասպարէզ է (մինչեւ մէկ աստիճան) ամեն մէկ ազգային անհատի ըզգայմանց եւ արտայայտութեանց:

Եթէ Հայրիկը պարսաւող յօդուածներ հիւրընկալելով Բեյ-պաշայ կը համարուինք, նոյնպէս Նորին Սրբազնութեան մասին գովարանող յօդուածներ հրատարակելու համար պէտք է ալ եւս «բեյ-պաշայ» արձակուինք, վասնզի եթէ մենք Հայրիկը ատողներէն լինէինք՝ պէտք էր որ զայն գովարանող յօդուածներն մերժէինք:

Մեր համոզումը առ այս սա է թէ՛ ինչպէս պատմական էջերուն մէջ ՊԱՊԻ իբրեւ մարդ իր թերութիւններն՝ նոյնպէս ՀԱՅՐԻԿԻ ալ իբրեւ մի մարդ իր թերութիւններն ունեցած է:

Ինչ կը շահինք իննեւտաններով դարու մէջ Հայրիկ Հայրիկ ըսելով չփանալ. այլ պէտք է Նորին Սրբազնութեան նման՝ ուրիշ Հայրիկներ յարուստանելու Զանալ ներկային մէջ որպէսզի ազգային մեր մայրիկներ չիւլան:

Մինչ մենք այսպիսի անկեղծ համոզումներով առգորուած «Արմէնիա» ազգային գործիչներու (մին ինքն է իբր թէ) զրպարտող կը նշանակէ զմեզ. դու դատէ ազնիւ ընթերցող, Կը պախարակէ նաեւ զմեզ տեղւոյս Ազգ. վարժարանի նորեկ ուսուցիչն խենդ եւ յիմար հրատարակելուն համար, այո՛ ինչ որ գրուած էր մեր նախորդ թերթերուն մէջ՝ այդ պարոնի ընթացից ճշգրիտ նրկարագրութեան մասին՝ ոչ ոք կարող է ժխտել զայն. եւ միթէ «Արմէնիա» կ'ուզէ որ չարասիրտն բարեսիրտ ըսենք եւ խենդին խելօք. . . . այդ դեր իրեն կը թուղուք կատարել:

Այն որակական ածականներն՝ որ անհերքելի ստորագելիք էին մեր նախորդ թուով նկարագրեալ փորձանքի մասին, «Արմէնիա» զայնս հայհոյութիւնք համարելով կը գտնէ 54 հատ վերադիրներ: Մի՛ որոտմոր, շատ չեն այդ բառեր, ամենքն ալ գրեթէ (չար) ածականէն ածանցեալ որակականներ են. «բեյ-պաշայ» միեւնոյնն է. բայց բունը շատ ուժեղ եւ յայտն լինելուն բազում ճիւղեր արձակած է, եթէ այդքան ծանր եւ շատ թուեցաւ Զեզ այդ ածականներ. կրնաք երեք անձինք, դու, սիրելի ուղղադատդ, եւ Գ. Տնդ. զայն մէջերնիդ բաժնել. 54:3=18, եթէ այս քանորդը իւրաքանչիւրիդ բեռնելէ յետոյ՝ դարձեալ ծանր գայ եւ անմարսելի, կրնաք այդ 18 քանորդէն մաս մ'ալ հանել եւ զրկել աստ Գ. Տ. ի խրատատու մի կամ երկու պարոններուն, եւ որով Զեր բեռն կը թեթեւայ. պ. Փարթուգաւեան լաւ ուշ դիր այս խնդրոյն լուծման. չ'սխալիս:

Մենք այդ ածականներ ուղղած էինք ուղղադատիդ

Զեր 16 ամեայ սանուկին, եւ ըսած էինք նմա թէ պարզէ՛ ի բաց չդարչդ, տեսնենք ինչպիսի արարած ես. հրէ՛ չ թէ խրտուիլակ եւ կամ թէ իմաստակ, ուղղադատը իր բերան ձմեռնային խիտնջի պէս կնքած է, ինչո՞ւ դու կը բանաս քո բերան եւ նրա տեղ քողդ կը պարզես ու թիւրադատի պաշտօն կը վարես, կ'երեւի թէ դու ալ այս գործի մէջ ազդիս կերած ու ակուսներդ առնուած են:

Լրագրապետ լինելով անշուշտ Գերականութիւնը մոռայած չես եւ քաջ գիտես որ առանց գոյականի եւ պարբերութեանց սոսկ ածականք ըստ ինքեանց ո՛չ թէ փաստ այլ խօսք անգամ չեն կաղմէր. ինչպէ՞ս այն ածականներն իբրեւ փաստ հայհոյութեանց կը ներկայացնէս մոլորագեան եւ կը խաբես զանոնք: Ինչո՞ւ մէկիդ կը նետես այն հիմնաւոր փաստերը որք են, Հոգաբարձուաց զայն դպրոցէն արտաքսելը, Տնօրէն դասատուին պ. Գ. Օվաճգեանի արդարացի բողոքներն Գ. Տ. ի անտանելի եւ յախուռն ընթացից մասին եւ վերջապէս Լնդհ. Ժողովոյն վերջնական վճիռն զայն դպրոցէն բոլորովին արտաքսելու յաւիտեան չ'վերադարձնելու պայմանաւ: Ինչո՞ւ սոյն վերոյգրեալ անհերքելի ապացոյցներուն վերայ նստած՝ եւ միայն այն գեղեցիկ գոյականին համաձայն ածականներն իբրեւ փաստ ձեռքդ բռնած ի տես կուգաս: Շատ իրական կը թուի մեզ որ դու երբ ընկողմը գտնես որոյ պատեանն պիտի ուտես եւ միջուկն մէկիդ պիտի նետես:

Պ. Փորթուգաւեան, զարմանալին սա է որ՝ ես մօտէն Գ. Տ. ի ինչպիսի մի անձ ըլլալը քաջ գիտնալով կը գըրեմ, իսկ դու ինչպէ՞ս հեռուէն ելեր կը պաշտպանես այնպիսի խօսական մը. կ'երեւի թէ Մարտէյի մէջ հեռուէն մարդ ճանաչելու հմայական նոր արուեստ մը ուսումնասիրած ես, իսկ եթէ քու 16 ամեայ ապուշ թրդթակցիդ գրածին նայելով հրապարակ կ'ելլէս շատ եւ շատ կը սխալիս:

Ուրեմն ազնիւ ընթերցող, սուտ է տեղւոյս Պատ. Հոգաբարձութիւնը. սուտ է Տնօրէն դասատուն, սուտ է «Դանուբ»ը սուտ է նաեւ տեղւոյս Լնդհ. Ժողովոյ վրձիռն. եւ իրա՛ւ է երիցս երանեալ պ. Փորթուգաւեան Պարոն:

ԻՆՉ ԵՆ ԱՍՏՈՒ ԱՐԺ?

---:---

Զով էր շնուծիւն ի հոյրիզուն վեհ արփիւն՝

Ոսկի, առնաթ, ջողադամանդ կը ցանէր.

Դաշտ կար ստաշտ ուր շրճէի տխրագին

Քաջամոռոյ, սրտիս ի մեջ կը վառէր

Անշէջ հրդեհ որ ի հոյրս կը մարի:

«Ինչ այս ցաւեր, անհուն խոցեր որ մաշեն,

Սիրտ մեր Աստուած, հեշտ խորխորով ես ըսի.

— Մարդիկ ով են որ գայն յիսկէն կը խեղդեն:

Այն ինչ ծիծաղ ջրթանցս վերայ կը գծուի,

Հընցեն հոգիս դառնութեան սեւ պտուղներ.

Այն ինչ տեսնա՛մ՝ հըրեշտակներ դեռաւի

Ընդ առաջն իմ՝ ցցոռին ժանտսիրտ սատաններ:

Աստուած ինչ եւ ետեւոյժներս այս անթիւ?
 Ինչ եւ ծիծաղեմ? Ինչ եւ պտուղն դառնոյթեան?
 Զորս իմանալ ձգեմ' անվերջ գիշեր տիւ:
 — Զորս եւ ջանքերդ արարչութեան փառք միայն:

— Հոն ուր մանկան դեռ ճորտանի ձիւ շտուի,
 Ուր ցնծալի երգեր պարեր կը գոռակ,
 Անդ եւս տեսնես մի կեանք մի շոյս կը մարի
 Մի ցոյրս մարմնն անշունչ անկեմ գերեզման:

Աստուած ինչ եւ այս ամենայն կեանք եւ մահ?
 Այս պատկերներ պատրանք միթե, կամ երազ?
 Ինչ եւ? մարդկանց սրտէն թռած ուն եւ ան! . . .
 — Մի՛ ձգեմք մարդ, դոքա գաղտնիք հաւատարմ:

Կ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՉԱԿՆՔԵԼՈՒ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

1794 թուականին, մեծ դժբաղդութեան մէջ կը դրո-
 նուէր Ֆրանսացւոյ երկիրն: Հանրապետական ժողովը
 կը պատերազմէր բոլանդակ Եւրոպիոյ հետ եւ կ'սպառ-
 նայր ներսը (ի Ֆրանսա) ամեն անոնց՝ որ չէին ուզեր
 խնկարկել յեղափոխականաց: Բազում դաւաճող մէջ կը
 հալածէր, կը չարչարէր եւ ի մահ կը մատնէր ամբողջ
 սերունդներ, մանաւանդ Վանտէ, ա՛յն երկիրն որ հաւա-
 տարիմ էր Ճէմարիտ Աստուծոյն, Ճէմարիտ Կրօնին եւ օ-
 րինաւոր Իշխանաց, այդ ժողովին բնաջնջմանց կէտ նը-
 պատակին էր: Ժողովը կազմակերպած էր բանակներ՝ ի
 կարգ բերելու համար, խնչպէս կ'ընէր ինքն ժողովը, ա՛յն
 ապստամբ գիւղացիներին՝ որք ամպարչաութիւնն ու ար-
 քայապանութիւնն ատելէ զատ ուրիշ յանցանք չ'ունէ-
 ին: Պատմութիւնն ըսած է եւ պիտի ըսէ դեռ թէ ի՞նչ
 ահարկու կոտորածներ կ'ընէին յեղափոխական զինուորք
 այն ատեն, ամեն ուրեք կը տեսնուէին միայն ընտանիք-
 ներ, որոց անդամոց կէսէն աւելին ի մահ մատնուած
 էր: Ծնողք՝ առանց որդւոց, որդիք՝ առանց ծնողաց, ա-
 մուսինք առանց ամուսնոյ էին:

Սուգն ընդամուր էր:

Բիէռ Պիկուան ազարակատէր ի գիւղն Սէն-Տէմի
 յապստամբեալ նահանգն Մէն-է-Լուառ, յայնժամ հանրա-
 պետութեան դէմ իւր երեք որդւոց երկուքը զոհ տուած
 էր արքայական բանակաց մէջ, եւ միայն կը մնար եր-
 րորդ զաւակն, 15 տարեկան, եւ հետեւաբար կարի նո-
 րատի՝ ծառայելու համար այն դատին՝ որոյ համար մե-
 ռած էին իւր երկու եղբարք: Բիէռ Պիկուան իւր բո-
 վանդակ սէրն ու գութը կեցրոնացուցած էր իւր ընտան-
 եաց սոյն յետին շառաւիղին վրայ, զոր՝ ըստ օրինակի
 Յակոբ նահապետի՝ Բենիամին մականուանած էր: Հա-
 զիւ կը թոյլատրէր նմա հեռանալ քովէն: Երբ Բենիա-
 մին, դիպուածաւ բացակայ, ուշանար վերադառնալ ի
 տուն, խնդհայրն անհանգիստ եւ գրեթէ յարտասուս՝
 փնտռել կ'ենէր, եւ երբ գտնէր, կէս մը յանգիմանելով
 եւ կէս մը աղաչելով՝ տուն կը բերէր եւ կ'սպառնայր,
 գրկելով զնա, թող չ'տալ դուրս ելնել:

Բենիամին, թէպէտ եւ տարիքին հետ բազմաժամբ՝
 բաւական մեծ եւ արտաքուստ զօրեղ, նորաստի սակալն
 փափուկ եւ վատառողջ էր: Երբէք բժշկուած չէր տեն-
 դէ մը: Որուն ենթակայ էր բազում տարիներէ հետէ. այս
 պատճառաւ հայրը մասնաւոր խնամք կը տանէր. յայտ-
 նապէս արգիլած էր նմա ամէն հոգնեցուցիչ աշխատու-
 թիւն, եւ միայն պարտք դրուած էր նորա վերայ՝ ար-
 ջաններն ի զաշտ տանիլ եւ խնամել:

Օր մը անհոգութեամբ ուռնուոյ մը կռթնած, երբ իւր
 անմեղ եւ խաղաղակոն պարտականութեամբ կը զբաղէր,
 տեսաւ որ դիմացի ճամբէն կաշեայ պայուսակով եւ գէն-
 քերով բեռնաւորեալ հանրապետական զինուոր մը կ'անց-
 նէր եւ շտապաւ կ'երթար ամենաուշագիր զգուշութեամբ,
 ա՛յն տեղ ուր իւր գլխաւորաց հրամանաւ նստակ կը տա-
 նէր:

Տղան Վանդէան նահանգաց մէջ զարհուրանաց ա-
 ռարկայ եղող կապոյտ մը (հանրապետական զինուոր)
 տեսնելով՝ ո՛չ զարհուրեցու եւ ո՛չ ալ փախաւ. եւ որ ա-
 ռաւերն է՝ տղոց կարի սովորական խաղով մը եւ բարե-
 մտութեամբ զինուորին ուղղեց սովորաբար ձեռքն ունե-
 ցած մեծ ցուպն, իբր թէ կրակ ընելու եւ գնտակ արծա-
 կելու գէնք մը լինէր: Ծանրորդ զինուորն, որ ամէն քայ-
 լի շուրջը կը դիտէր, տեսնելով որ տղան գէնք կ'ուղղէ
 եւ կարծելով թէ կրակ պիտի ընէ, շտապաւ հրացանը
 շտկեց եւ կրակ ըրաւ:

Մեծ գոչիւն մը լսուեցաւ. եւ Բենիամին կուրծքէն
 դարնուած՝ գետին ընկաւ արիւնաթաթաւ: Մահատու հը-
 րացանին ձայնէն եւ սղունց ցաւալի գոչիւնէն քիչ մը
 անդին աշխատող երկրագործք վաղեցին հասան զինու-
 ւորը բռնեցին, ձեռքերը ետին կապեցին եւ տարին ի Սէն-
 Ռէմի, եւ անդ՝ առ ի չգոյէ բանտի, փակեցին ներքնա-
 տան մը մէջ, ուրկէ անկարելի էր փախչել, եւ նոյն ժա-
 մուն ամեն կողմ պահապաններ դրին:

Ո՞վ կրնայ նկարագրել խնդհայր Պիկուանի զգացած
 անլուր ցաւն ու զարհուրելի ապշութիւնն երբ բերին իւր
 վերջին որդւոյն դիակը պատգարակի մը վրայ: Նախ չկր-
 ցաւ հաւատալ իւր դժբաղդութեան:

Կը սխալիք կըսէր, իրեն միտարական խօսքեր ուղ-
 զողներուն, կը սխալիք, Բենիամինս մեռած չէ քնացած
 է. . . ինչո՞ւ Բենիամինս մեռած լինի. . . աշխարհիս մէջ
 ո՞վ կրնէ այսչափ բարի, այսչափ քաղցր, այսչափ անվը-
 նաս արարածի մը կեանքը կորզելու անգթութիւնը ո՞վ
 կրնայ սպաննելու կարողութիւնը ունենալ ի ծննդենէ
 ի վեր Ս. Կոյսին նուիրեալ զաւակը, օ՛ն, օ՛ն, բարեկամք
 կը սխալիք. . . ե՛լ Բենիամին, արթնցիր, ե՛կ գրկել հայրդ:

Հայր Պիկուան տեսնելով որ իւր գորովագութ կոչման
 չպատասխաններ որդին, չգիտնեալ եւ զողորմուն, ծռեցաւ
 որդւոյն վերայ, բացաւ նորա հագուստներն եւ երեւան
 հանեց մէկ կողմէն միւս կողմն անցնող այ՛ն ահարկու
 վէրքն: Յայնժամ դառնապէս եւ սրտաճմիկ գոչիւննե-
 րով արտասուեց:

Ո՛հ, իրաւ է եղեր, ըսաւ, Աստու՛ած իմ, մեռած է,
 սպաններ են զաւակս, ինչ ըրի Աստուծոյ որ ուղած է
 աւուր ձեռքէս վերջին միտարութիւնս, որ այսպէս
 ջախջախած է զողորմուն ձեռացս մէջ ծերութեանս գա-

Լազանը սիրելի՛դ իմ Բենիամին, միայն լոյս աջացա, որ կը մնար ինձ երկրիս վրայ, ահա այժմ կերթաս միանալ եղբարդդ եւ մօրդ հետ. բռնե՛ր նոցա որ թողած ես զիս աստ թախծութեան մէջ եւ կարի փափաքող եմ գալ ձեզ միանալու համար. . . . բայց ո՞վ սպաննեց զնա եւ ինչո՞ւ համար. . . . սոյն ոճիրը գործողը, թ'է վատ եւ թ'է անգութ, ո՛չ սիրտ եւ ո՛չ գութ ունի. . . ուրեմն հայր չունի եղեր. . . կատաղի գազան մ'է եղեր. . . ոհ, եթէ հայր ունի թող հայրը զրկուի, ինչպէս որ գու, իմ սիրելի Բենիամինս, զրկած ես այժմ ինէ, թող նորա արեւնաթաթաւ դիակը, ինչպէս քուկդ, տանին տարածեն իւր աշաց առջեւ, ինչպէս զքեզ բերին առ իս, որպէս զի այդ հայրն ինձ վիճակակից լինի, եւ ինձ պէս անցունէ իւր օրերը սուգով որ պիտի վերջանայ մահուամբ:

Հայր Պիլուան մի քանի ողբէ, հեծիծանքէ եւ արտասուքէ վերջ, որդւոյն սպանման ողբալի պատմութիւնն իմանալու եւ մտիկ ընելու չափ հանգարտութիւն կրցաւ ունենալ. Երբ իմացաւ թէ սպաննիչը ձերբակալուած է վայրենի ուրախութեան աղաղակ մը արձակեց նման այն աղաղակին, զոր կարճակէ յօշոտելի որսը սուր մագիլնեւրուն մէջ բռնող բորենին:

Օրհնեալ լինի Աստուած, ըսաւ դէպ 'ի երկինք վերջընելով զողբոյնն ձեռքերը, բարի է, արդար է Աստուած չէ ուղած որ այսպիսի ծանր յանապօք մը անպատիւ մնայ. . . թող իւր Սուրբ կամքը լինի, նոյն ինքն ես լինիմ դահիճը:

ԹԱՐԳՈՒՄՆԵՑ Գ. Ֆ.

(Շարունակէ)

ԱՅԼԵԻԱՅԼՔ

Յովհաննէս Այվազովսկու այն նկարները, որ պիտի վիճակ գցուին յօգուտ սովեակների, արդէն ստացուած են Օդեսայում, նկարները թուով 18 են: 8 փոքրագիր եւ 6 մեծագիր ջրաներկ (աքուարէլ). բայց մէկից ամենքն էլ ծովային տեսարաններ են:

Մեծագիր ջրաներկներից առանձնապէս գեղեցիկ են «Նաւի խորտակումն» եւ «ազատիչ նաւակի ծովը դուրս գալը»:

Մնացեալ չորս պատկերները իւղաներկ են չափաւոր մեծութեամբ եւ չքեղ շրջանակներով: Պատկերներից մէկը «արեւի մուսքն է», միւսը «անհանգիստ ծովը, երրորդը — «ալեկոծութիւն» եւ չորրորդը — «վեսուվ»:

Օդեսայի թերթերի խօսքով Այվազովսկու՝ սովեակների օգտին նուիրած պատկերները բաւական խոշոր գումար արժեն:

«ԱՐՁԱԳԱՆՔ»

Մի ազգային կը յայտարարէ թէ ունի ծախու համար իր մօտ խաչատուր Աբովեանցի «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» անուն գիրքը նոր եւ ընտիր կազմուած, սպեալ 'ի Թիֆլիս 1858 թ. այժմ բոլորովին սպառուած է եւ գրադարանի մը աւանդարարք տեղը կը բռնէ:

Փափաքողք պարտին դիմել խմբագրութեանս հասցէին:

2—3

ՆՈՐ ԼԵԱՏԱԲԱԿՈՒԹԵՐՆ

ՆՈՐ ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ի ՊԵՏՍ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

Կ. Մ. ՀԱՃԻ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Շախիյան աշակերտ Պերսեդեան
վարժարանի 'ի Պոլիս

ԲՈՒՍՃՈՒԳ

ՏՊԱԳՐ. Մ. Ս. ԹԻԻԹԻՆՃԻՅԻ

Ազգ. վարժարանաց համար պիտանի մի գրքոյկ է. կը յանձնարարեմք մեր ամեն տեղի Պատ. Գաւառապետաց որ նախակրթարանի աշակերտաց գաղաքար մը տալու համար բնագիտութեան վրայ, քաջալերեն մեծարոյ հեղինակին սոյն փոքրիկ գործն:

Կը վաճառի հեղինակին մօտ. գին 1 ֆր:

Փափաքողք պարտին դիմել հետեւեալ հասցէին՝

Mr. G. Hadji Stepanian

(BULGARIE)

CHOUMLA

ՇԱԽՈՒ ԳԻՐԲԵՐ

Հետեւեալ գիրքերն կը ծախուին «ԴԱՆՈՒԲ»-ի խմբագրատան մէջ. իրենց առջեւ նշանակուած գիներով եւ փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով:

ԲԱՅՅԻ, ԽԵՂԹԸ (Արկածներ վերջին Ռուս-թուրքական պատերազմից) եւ ԶԱՄԱՆԻՎԻՆ, (Մի պատկեր նրա արշաւանքից). երկուքը մէկտեղ մէկ հատորի մէջ ամբողջուած. Բ. Տիպ: 8 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻ, ԿԱՅԷՆԻ ԿՏԱԿԸ 5 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻ, ՄԻՆԸ ԱՅՍՊԵՍ, ՄԻԻՍԸ ԱՅՆՊԵՍ Պատկերազարդ վէպ. Թիֆլիսի վաճառականների կեանքից: 4 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻ, ԿԱՅՆԵՐԻ ՎԵՐՋԸ 1 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻՒ Պատկերը խոշորագիրը. 2 ֆր:

» » աւելի փոքրը. 1 ֆր.

ՏԵՐ ԵՒ ԽՄԵԱԳԻՐ Մ. Ս. ԹԻԻԹԻՆՃԻՅԻ

ԲՈՒՍՃՈՒԳ ՏՊԱՐԱՆ Մ. Ս. ԹԻԻԹԻՆՃԻՅԻ

Скоро-печатница на Спиро Гулабчъв.